

CAP-ը կարող է օգնել Ձեզ

- Հասկանալ՝ արդյոք դուք համապատասխանում եք Աշխատունակության վերականգնման դեպարտամենտի (DOR)-ի կողմից առաջարկվող աշխատանքի տեղավորման ծառայություններին, որոնք կօգնեն Ձեզ գտնել աշխատանք:
- Հասկանալ՝ ինչպես պետք է մշակել զբաղվածության ծրագիր, որը կարող է ներառել նաև ինքնազբաղվածության ծրագիրը:
- Իմանալ ավելին DOR-ի և Անկախ ապրելակերպի աջակցության կենտրոնների ծառայությունների մասին:
- Պաշտպանել Ձեր շահերը, որպեսզի ստանաք Ձեզ անհրաժեշտ ծառայությունները:

Ինչպես կապվել Շահառուների աջակցման ծրագրի (CAP) հետ

Դուք կարող եք կապ հաստատել Շահառուների աջակցման ծրագրի հետ՝ զանգահարելով հետևյալ անվճար հեռախոսահամարով.

1-800-776-5746 կամ
1-800-719-5798 (TTY)

DRC-ն օգնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հասկանալ իրենց իրավունքները, դառնալ սեփական շահերի պաշտպաններ և տրամադրում է իրավական ներկայացուցչի ծառայություններ հաշմանդամությանն առնչվող գործերում:

CAP

Ինչպես է Շահառուի Աջակցության Ծրագիրը օգնելու Ձեզ

Ծրագիրն իրականացնում է՝
Disability Rights California
*California's Protection and
Advocacy System*

www.disabilityrightsca.org

#5474.10 (Armenian)

drc Disability
Rights
California



շրջանակում ֆինանսավորվող այլ գործընկերների ծառայությունների կարիքը:

Որոշելու համար, թե արդյոք մենք կարող ենք ուղղակիորեն ներկայացնել Ձեզ, մենք ուսումնասիրում ենք Ձեր գործը, շահերը ինքնուրույն պաշտպանելու Ձեր ունակությունը, շահերի պաշտպանության այլ աղբյուրները, որոնք կարող են օգնել Ձեզ և այլ, թե արդյոք Ձեր խնդիրը պատկանում է DRC-ի առաջնահերթություններին և արդյոք DRC-ին ունի Ձեզ օգնելու համար անհրաժեշտ ռեսուրսները:

Ձեր պատասխանատվությունները

- Մասնակցել DOR-ի կողմից կազմակերպվող Ձեր աշխատունակության վերականգնման ծրագրին:
- Պահպանել DOR-ում պահվող Ձեր գրանցումների պատճենները:
- Հայտնել Ձեր խորհրդատուին այն փոփոխությունների մասին, որոնք ազդում են DOR-ի կողմից Ձեզ տրամադրվող ծառայությունների կամ նպատակների վրա:
- Հարցնել, եթե չեք հասկանում:

Ձեր իրավունքները

- Դիմել ծառայությունների համար և ողջամիտ ժամկետում պարզել ձեր իրավունակությունը օրենքի համաձայն:
- Մասնակցել ձեր աշխատանքային հմտությունների և հետաքրքրությունների գնահատմանը և կազմել զբաղվածության անհատականացված ծրագիր (IPE):
- Ստանալ Ձեր IPE-ի տպագիր օրինակը և գրավոր ծանուցվել, եթե DOR-ը ցանկանում է փոփոխել կամ մերժել ձեր ծառայությունները կամ փակել Ձեր գործը:
- Վերանայել Ձեր IPE-ն տարեկան մեկ անգամ:
- Բողոքարկել DOR-ի որոշումը, եթե համաձայն չեք դրա հետ և պահպանել Ձեր ծառայությունները մինչև բողոքարկման գործընթացի ավարտը:
- Կատարել ողջամիտ և իրազեկված ընտրություններ և ստանալ հարգալից վերաբերմունք:
- Ստանալ համապատասխան ծառայությունները արագ և առանց ուշացման:
- Աշխատել զբաղվածության այն նպատակի ուղղությամբ, որը Ձեզ հնարավորություն կտա աշխատել Ձեզ ցանկալի վայրում և վճարվել հաշմանդամություն չունեցող աշխատակիցների չափով:
- Ստանալ Չբաղվածությանը նախորդող անցումային շրջանի ծառայություններ (Pre-ETS), որոնք այլ կերպ կոչվում են «Ուսանողական ծառայություններ / Երիտասարդական ծառայություններ», եթե Դուք դեռահաս եք կամ չափափակ երիտասարդ և ունեք դաշնային և նահանգային օրենքներով սահմանված կարգի հաշմանդամություն:

Շահառուների աջակցման ծրագրի (CAP) մասին

Կալիֆորնիայում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը տրամադրում է CAP ծրագրի ծառայություններ որը նահանգում: CAP ծրագրի շրջանակում տրամադրվում է տեղեկատվություն, խորհրդատվություն և շահերի պաշտպանություն՝ օգնելու հաշմանդամություն ունեցող մարդկանց ստանալ աշխատանքի տեղավորման ծառայություններ DOR-ից, օրինակ ստանալ վերապատրաստում, կրթություն և աշխատանք: CAP-ն օգնում է պաշտպանել այն մարդկանց իրավունքները, ովքեր ստանում են կամ ունեն DOR-ի, Անկախ ապրելակերպի աջակցության կենտրոնների կամ Աշխատունակության վերականգնման օրենքի շրջանակում ֆինանսավորվող այլ գործընկերների ծառայությունների կարիքը:

Ո՞վքեր կարող են օգտվել CAP-ի ծառայություններից

Մարդիկ, ովքեր ունեն հաշմանդամություն և ովքեր ստանում են կամ ունեն DOR-ի, Անկախ ապրելակերպի աջակցության կենտրոնների կամ Աշխատունակության վերականգնման օրենքի

